

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Պուշկարին	հաւար
Տարեկան	12 Թր.
Վեցամսայ	6 »
Արսասահմանի	
հաւար տարեկան	15 »
Վեցամսայ	8 »

Ամերիկայի	հաւար
Տարեկան	3 ցր.
Վեցամսայ	1.50 »

Ծանուցանեալ տղր առաջին երեսին հաւար 40 սխիլ վերջին երեսին հաւար 20 սխիլով է. երեքին աւելի ակազաւներու հաւար 20 0/0 զեղէ կըլլայ:

Վառնայի հաւար ձևով 10 սխիլով

# ՇԱՐՅՈՒՄ

## ՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂՈՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՐԱՎՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՅՈՒՄ ՕՐԵՐԸ

Նախկին և նորագոյն իրարազոյրեալս հասցիքն.

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoun“ Varna (Bulgarie)

Արսասահմանի հաւար ձևով ( 20 ՍԱՆԹԻՄ ) Պուշկարինի հաւար ձևով ( 15 ՍԱՆԹԻՄ )

Գրութիւնք ևս չեն տրուիր

«ՇԱՐՅՈՒՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹՅՈՒՆ ԲԱԺԱՆԳԻՆԸ ՊԵՏՐ ԵՒ ԿԱՆԵՒԿ ՎՃԱՐԷ

### ԵՐԱՆԻ ԹԷ

Երանի քե հայ գիւղացիներ փոքրահասակ ընտանիքներու հետ իր շնորհակալութեամբ անցանք:

Վարուցանի սիրոյն հետ կենտրոնաւոր իր կրթութիւն վայրագ տեսնել աշուքներու:

Երանի քե հայ հարուստ աշուքներու շնորհակալութեամբ իր անցանք:

Սիրեհ ոսկիներ պաշտօնակներով իր անցանք:

Նրազ անցուր ընտանիքներու մասնակցութեամբ:

Հայրենիքի հարստութեամբ ևս իր անցանք:

Երանի քե հայ կրթութեամբ և իրարակալութեամբ ընտանիքներու մասնակցութեամբ:

Բարիքներ զիտ միայն տեսնել զուր ուսեր:

Իսկ չարեանքները միայն ընտանիքներու:

Երանի քե իտուք մը գործիչ հայ տղաք:

Չը գրադարանի կրթութեամբ անասի վերջինով:

Չը պղծութիւն հաւանութեամբ ազգը, զիտ, փայտ:

Իրենց տրուալ, ևս պատմութեամբ կըտրուի:

Երանի քե հայոց արեւոյն մայրութեամբ:

Վրաստանի հայ տղաք զուր ընտանիքներու:

Եւ իշխութեամբ զուր ընտանիքներու:

Չեմքը գրկած բոց մայրութեամբ սեւեռութեամբ:

Եւ այն ասեւ երկիւնք գուցէ կարեւոր:

Հաւանութեամբ մեր Կրթութեամբ զուր:

Եւ իտուքներու զուր ընտանիքներու:

Եւ անմահութեամբ զուր ընտանիքներու:

Վ. Ե. Տ. Ա.

### ԵՂԵՐԱ—ԿԱՏԱԿԵՐԳԱ ԿԱՆ ՎԻՃԱԿ

Երեւոյն շարժումը արեւելքէն արեւմուտքէն շարժում են գտնուում երկու շնչակեան գործիչներ՝ Հմայակ Խուշփուլեան և պատեւելի Չիթճեան: Իրանցից առաջ Վառնա հասան Հնչակեան պաշտօնակաւ յայտարարութիւնները որոնցով ժողովրդին գուժովում էր Հնչակեաններին միութեանը անմիջապէս հետեւող բաժանումը տեղի խոյնաճարակ կերպով:

Միութեանը զանգահարեցին Ամերիկայում, նոյն տեղից էլ թնդանթիւները որոտացին բաժանումը և Ատլանտեանը ճեխքելով մեզ հասցրին:

Եղերա—կատակերգական կացութիւն...

Այդ սարսափելի խորտակումից յետոյ՝ այդ երկու ճամբորդ գործիչներին Երեւոյն ամէն մի հայի զլխում հարց ծագեցրեց. ինչո՞ւ, և ի՞նչ երեսով նրանք մտնում են ժողովրդի մէջ:

Այդ հարցին հետեւեալ պատասխանն է տալիս պ. Խուշփուլեանը, ինչպէս կերբեւեակ Չիթճեանը.

«Եկել են Հնչակեան մասնաճիւղերին համադրելու որ չը բաժանվեն, ճիգեր թափեն նոր պատգամաւորական ժողով կազմելու որ կարողանան մի նոր կեդրոն ստեղծել և երկուսի բաժանումը կեդրոնից կոչ չը շնչակեանները խնդրեցին, ու ապա նոր ձեռնարկին բուն յեղափոխական գործունէութեան...»

«Մի սաստիկը էլ չու, մի սաստիկը, գարունը կըրպայ և քեղ համար թարմ խոտ կը քաղենք: Սպասիր Հայ ազգ, սպասիր. Հնչակեանները նորից կը միանան, կրկին մի հարիւր հազար փրանք կը ծախեն իրենց ճամբորդութիւնների և ժողովների համար, ու վերջը քո ազատագրումի գործով կըրպայեն: Ճշմարիտ պ. պ. Խուշփուլեան և Չիթճեան արտակարգ լաւատես մարդիկ են երե-

ւում իրենց քարուքանդ եղած կուսակցութիւնը նորից վերականգնեցնելու խնդրում: Մեզ թուում է որ պ. պ. Խուշփուլեան և Չիթճեան կամ իրենք բացարձակ երազողներ են, կամ թէ առանձին նպատակներով աշխատում են ժողովրդին Երազների մէջ պահել: Ես սիրով կընդունեմ որ այդ երկու պարոնները բացարձակ երազողներ են Հնչակեանութեան ամբողջական և մեր ազատագրութեան գործում կարեւոր դեր կատարելու մասին: Բայց հրապարակի վրա կայ Չիթճեանի մէջտեղ նետած ուսուցչայի և տաճկահայի խնդիրը? Թերեւս գաղտնի կերպով այդ պրոպագանդան է մղվում տաճկահայերից տարրեր որսալու և անկամ խայտառակութիւնը մի քիչ թնթեացնելու համար: Տեսնենք այդ էլ անպատճառ պագան շուտով կը պարզէ: Հնչակեանները սովորութիւն չունին իրենց սիրապրիզները ուղարկելու ՎԱՐՊՈ

### ԲՈՐԻՍ ՍԱՐԱՖՈՎԻ ՆԱԿԱԿԸ

Սարաֆով թրքական սակմանագրութեան անդամներն պէս «Տի Տէյիւնկ» խմբագրութեան պատկանող բարեկամներէն մէկուն հետեւեալ նամակը գրած է:

«Յարգելի պարոն, հազիւ յարմարութիւնը ունեցայ ձեր հարցումին պատասխանել: Դուք կը հարցնէք, թէ արդեօք ժամանակը չէ՞ որ մենք հրաժարինք յեղափոխական գործունէութենէ: Քանի որ Եւրոպան ձեռք տած է Մակեդոնական խնդիրը:

Մենք կը պատասխանենք որ մեր հայրենիքին դաւաճանած պիտի ըլլանք, եթէ սուանց Եւրոպայի մեր գործերուն միջամտելն դրական օգուտ մը տեսնալու դարձեցնենք յեղափոխական գործունէութիւնը: Դուք գիտե՞ք որ Եւրոպան շատ անգամ զիւրազարտական միջոցներով պայտպան հանդիսացած է Թուրքիոյ քրիստոնեաներուն, որոնց հետեւանքը եղած են բարենորոգումներու փոխարէն, քրիստոնեաներու մեծաքանակ կոտորածները:

Հայերու օրինակը դեռ ամենուս մաքին մէջ թարմ է: 40,000 հայերու արեւը դեռ Պոլսոյ փողոցներուն մէջ չորացած չէ: Ուրեմն բաւական պատճառներ ունինք թերահաւատութեամբ վերաբերելու եւրոպական դիւանագիտական միջամտութեան: Մեզ համար անհերքելի ճշմարտութիւն է թէ մինչև որ քանի մը գունդ եւրոպական զօրքեր չը տեսնուին մեր բազմաշարժ հայրենիքին մէջ, հոն անկարելի պիտի ըլլայ քիչ թէ շատ մարդու նման ապրիլ:

Երեւոյնի պիտի ըլլար կարծիք որ մենք յեղափոխութեամբ պիտի կարենանք թողքերը Եւրոպայէն դուրս վանել, բայց հաւատացէ՛ք ինձի որ յուսահատութեան հասած Մակեդոնացի քրիստոնեաները բաւականաչափ պատրաստ կը գտնուին իրենց անտանելի կեանքը սուղ ծախելու համար: Մեթէ վերջապէս Եւրոպան չը պիտի ցնցուի հանդէպ այն սուկալի գոհարու գոր իր ազատութեան համար պիտի տայ Մակեդոնացի քրիստոնեայ ժողովուրդը:

Ամեն տեղ ալ կը հաւատան որ մեր ցանկացած բարենորոգումները Պալլեանեան բոլոր պետութիւններուն գոհացում չը պիտի տան եւ կարելի է որ անոնց կողմէ բողոքի տեղիք տան, բացի Պուլկարիայէն:

Մենք արդէն շատ անգամ յայտարարած ենք որ մեր խնդիրը ազգային չէ, այլ քաղաքակրթական, որուն լուծման միջոցին պիտի յարգուի միայն Մակեդոնացիին խօսքը, որ մահը արհամարելով կուր կը մղէ, եւ Եւրոպան միայն այդ ձայնին ակնաջ պիտի կախէ, եթէ իսկապէս այդ գործին պիտի նայի իբրեւ մարդասիրական վերծի վրայ:

Չէ որ վազրի ճիրանէն մարդ մը ազատած միջոցին չը պիտի մտածենք թէ այդ քայլը երրորդի մը համար հաճելի է թէ ոչ:

Մենք կուզենք այնպիսի բարենորոգումներ, ինչպիսին երաշխաւորած է մեզ Պերլինի դաշնագրութիւնը: Թուրքիան աղ մեզի չի տար առանց Եւրոպայի դիմում միջամտութեան: Եւ ստոր համար է որ մենք զենքի կը դիմենք և եթէ այդ անհաւասար կոտորումն մէջ ողջ մնանք, մեր զենքերը միայն Եւրոպական զինուորներուն պիտի յանձնենք:

Նախագայով որ այս անգամ մեր դէպի սկսնալիքի հայրենիքը ունեցած սրբազնագոյն պատրականութեան սեղանին զոհը պիտի ըլլանք, կը նետուինք անհատար կուր մէջ:

Ենթանի թէ այնքան զոհերու արիւնով յղիացած երկիրը ազատութեան արեգակին ճառագայթներով լուսավառուի» :

### ԴԵՍԻՑ ԴԵՆԻՑ

Ռուս ճարը հրովարտակով մը յայտարարել է որ իր երկրի ներքին կառավարութեան մէջ բարեփոխութիւն պէտք է մտցուն մանր ազնուականները, գիւղացիները և հոգեւորականութիւնը նիւթագէտ ու բարոյագէտ բարձրացնելու համար : Ու արդէն առանձին յանձնախումբ մը կազմուել է բարենորոգմանը ծրագիրը մշակելու նպատակով : Ռուսական խլրտուները ուրեմն առանց արդիւնքի չեն մնացած : մէկ կողմէն կառավարութիւնը ամեն խիստ միջոց գործ կը զնէ վերջ մը զնելու պարբերական ներքին խլրտուներուն : միւս կողմէն վարչական միջոցներ ձեռք կառնէ ժողովուրդը կասեցնելու համար յեղափոխական հոսանքին անձնատուր ըլլալէ :

Անգլիական ժողովուրդը բաւական ժամանակէ ի վեր աղմուկ բարձրացուցեր է Գերմանիայի դէմ յայտարարելով որ Գերմանիա կը ձգտի ծովային առաջնակարգ պետութիւն մը դառնալու ապագային Անգլիոյ հետ աւելի յաղորդ մրցելու նոյն իսկ անոր գաղութները խլելու զիտաւորութեամբ :

Անգլիացիք առհասարակ հաւատք չունին կեղծաւոր ու ընչաքաղց վիճելիքներ վրա, ու երբէք զոր չեն ըլլար երբ Անգլիա ու է քաղաքական գործի մէջ Գերմանիոյ հետ ձեռք ձեռքի տուած կաշխատի : Վէնէցուէլայի խնդրոյն մէջ Գերմանիոյ բռնած ընթացքը բոլորովին կառուցուց անվիացիները որոնք քննադատութիւններու տարափ մը տեղացուցին իրենց նախարարներուն : մինչեւ անգամ և թագաւորին գլխուն : վերջապէս անգլիական կառավարութիւնը ժողովրդին բաւարարութիւն տուաւ և հիւսիսային ծովին մէջ ամուր նաւահանգիստ մը հիմնելու որոշումը տուաւ :

Անգլիական կառավարութեան այդ որոշումը մեծ յուզում առաջ բերած է Գերմանիոյ մէջ : հիմակ ալ գերմանական մամուլն է որ աղմուկ է բարձրացուցեր : իսկ գերմանական կայսրն ալ նորէն օյինազարթութիւններու կրնէ յայտարարելով որ ինք և Գերմանիա ապագային Անգլիոյ գլխուն օյին մը խաղալու երբէք նպատակը չունին :

Թուրքիա արտաքուստ զբաղուած է բարենորոգումներու խնդրով : Մակեդոնիոյ ժանտարմբին վարելու և կազմակերպելու համար Գերմանացի սպաներ կուզէր նշանակել : բայց թերթերը կը հաղորդեն որ ոտու կառավարութիւնը ըրողքած է Սուլթանին այդ արտադրութեան դէմ :

ԿէՑ

### ՈՐՐԱՆՈՑ ՈՒ ԴԵՆԻ ԻՆՉԵՐ

Մորունկ գաղանթներու և ահաւոր գիտաւորութիւններու կծիկը ձեռքերնուս մէջ է, թէն և ինձուկ, բայց մինչեւ ծայրը քակելու համարութիւնը պիտի ունենանք, փաստերու պիտի օգտագործուիլը ապացուցած ըլլալու համար :

Տիկին Բոլլոնայի բախտախնդիր մը : Նուազի տան խանութ մը : Ձեռքն ինկած աղոց ալ ապգին համար կորուսուածներ ըլլալը : Մեր քննութիւնները շարունակեցինք ու պիտի շարունակենք մինչեւ Բոլլոնայի տան մէջ քար քարի վրայ չի Մնայ :

Քաւոր թատուի վրայ եղած հրատարակութիւնները Բոլլոնայի ականջը հասնելով վերջնական կերպով վաճառած է զայն իր առեւէն : կանխաւ անոր միջոցով դժգոհ տղայոց ձեռքէն իրենց ծնողներու հասցէին գոհունակութեան նամակներ առնելով :

Տէր Թաղեոսը և կիներ Հիմա, մեր գաղութին մէջ, ալ չեն փառաբաներ կոմսուհին, նստած տեղերին կրտսն թէ՛ հրէջ մըն է ան, իրենք խարուած են և տղոց բոլորովին արգիլուած է հայերէն լեզուն և հայկական աղօթքները :

Նուազիի մէջ և անոր ճամբուն վրայ տեղեկութիւնները քաղցրինք, ոմանք կրտսն թէ՛ սրբանոց ըստածը հաստատութիւն մըն է ճիզուկութեան սեւ փշերուն տակ : ոմանք գրուարձութիւններէ և հաճոյքներէ քաջուած քանի մը պատաւ մոլեռանդ կիներու մէջ գործը կը նկատեն : ըսողներ ալ եղան թէ՛ Հայկան որբանոց անտան տակ ապաւով ժամադրովայն մըն է : թող այս ասէնքը լոկ կարծիքներ մնան առ այժմ, սակայն զանազան կարծիքի տէր մարդիք համաձայն են, որ Բոլլոնայի դրամ չունի, ապառիկներով և մուրազկանութեամբ կապրի շահագործմանով հայ տղաքը :

Նիւթական հարցը լուծուած ըլլալով անով չի պիտի զբաղինք : տիկին Բոլլոնային իսկ ալ իս միլիոնատէր չի ներկայանար և իր դրամ չունենալը պատահող հայուն կրնէ միայն աւելցնելով, որ ինքը հաւատք ունի ուրիշներու առատ բարեգործութեանը վրայ :

Սեղծ կնիքը, որպէս թէ նոր է հատցած իրեն յանձնուած տղոց որք չըլլալը և ինքզինքը կը նկատէ Մաքսուտ Փափագեանի ապուշ խաչագողութեանը զոհ : իւրի պէս ջուրին երեսը ելլել կուզէ հիմա, որքեր գտնծին : Յօքայնէն, Սիլիստրէն, Քոնսթանցաէն և Պուրթէշէն առանձները իրենց ծնողաց պիտի վերադարձնէ մէկ մէկ կ'ըրիկ գումարի պահանջով : ևրկու աղջիկներ արդէն զրկուելու վրայ է :

Որբերու խնդրով հետաքրքրուող հայու մը տիկին Բոլլոնա կը յայտարարէ անկեղծութեամբ :

«Կը սիրեմ հայ ցեղի ոյժը, տկուցուցիւնը ու շիւտքիւնը և զանազան շնորհակալութիւնները : մտածեցի որ հայերու ներկայ վաս դրութիւնը անկեղծ և նպաստաւոր պարագան է իսկուներու համար այդ ցեղը մ'իկնի (Քրանսակահիւն), այդ նպաստակով քացի այս հաստատութիւնը, ուր կը

մտածեմ շարտակաւ կրթութիւն մը տալ հայ որբերու, սորվեց'ել անոնց միջակի արտեսներ, ինչպէս ուկրաինացիք, կոչակարտիսիւն, և գրաշարութիւն» :

Հայը կրնէ թէ՛ այս տղաքը, հրբ իրենց երկիրներ վերադառնան որ պէտքի օգտակար ըլլան իրենց հայրենիքին ազգէ կրնէք, եթէ հայոց սիրելի արուեստներն ալ սորվեցնել տաք, ինչպէս երկաթագործութիւն, զինագործութիւն և հողագործութիւն :

«Բայց այս տղաքը այլևս չի պիտի վերադառնան իրենց երկիրները կը պատասխանէ Բոլլոնային :

— Հապա՞ : «Ասոնք փոխանակ իրենց տեղերը դարձնելու պիտի պատուատու մեր ցեղին վրայ՝ սովորապէս ըլլալ հայ արդաքը Քրանսուհի որբուհիներու, հայ աղջիկներն ալ Քրանսուհի որբերու հետ :

Յետոյ, կը հարցնէ Հայր : «Հայերը լեզուներ սորվելու ընդունակ լինելով քովս սորված պիտի ըլլան մի քանի լեզուներ, որոնց չնորձի պիտի կրնան ապրուստին ճարել Քրանսուհու քաղթականութեանց մէջ (1)» :

Ալ աղբերնիք լոյս Ռուսներու հայ շալվարը զգապապաներ և պիտի լին տուտու խաթուններ : Բոլլոնայի ազգափոխական բալիբան մտնող հայ տղան ու աղջիկները, քանի մը տարի ետքը Քրանսուհի դուրս պիտի ելլեն անկէ, մէկտ փոխին անունը միւսիւ Ալֆոնս, միւսիւ հարսին անունն ալ մտաւ Ալֆոնսին պիտի լլլայ ուսնոցմէ ելածներն ալ, ձեր շալվարէն, կոծակէն պիտի լին ու քիւրքէն ի պնող մէկ մէկ պղտորիկ Քրանսուհիներ :

Վայ ձեզի, եթէ ապշուելիտմբ, օր մ'ալ ծնողական սէրէ մղուած լեւ ու ծով թնկէ, ձեր թոռնիկները տեսնելու ալ չ'ուով ու ելլիք մինչեւ Յրանսա գաք : նոյն իսկ ձեր զաւակները մեր զիւղացի Օլասնց միլիարին պէտ՝ զձեզ պիտի ներկայացնեն ձեր թոռներուն այսպէս ասոնք մեր զիւղի չ'օպաններն են» :

Բ.

Փարիզի և Պէճիքայի հայոց հոգեւոր հովիւ հայ Վատմապուհ Քիպարեանի Պուքրէ : րնակող Պ. Պոլոս Մանտալեանի, գրած նամակէն քանի մը քողուածներ :

«Շատ կը ցաւիմք որ թէ դուք և թէ Ռուսներն և Պուլկարիոյ քաղաքաց սիրեցեալ ազգայնոց մերոց ոմանք զո՞ մը դարձած էք պաշտօնադատը թաղէս քանանայ Փափագեանի և իր որդւոյն շահախնդիր, թափառաչըրիկ Մաքսուտի ուրումն : որք գործակիցք եղած են տիկին Բոնթէս Բոլոնա անուն ֆրուանսուհու մը և նորա շահախնդրական վատ ձգտումներն յաղոցներու համար ամեն խաթութիւն ու շատ հնարք ի գործ դրեր են ազգին անմեղուկ զաւակներէն տասներկու հասն մասնելու անոր ճիրանն : որուն նշանակելի անցանքն՝ յայտնի էր և ներկայ քողարկեալ կեանքն՝ անստոյգ և շատ մոլ թէ տակաւին» :

Շատ տխուր եմք նաև, որ Ռուսներն և Պուլկարիոյ քաղաքներու Ս. Հարք և պատուարման թաղապետներն :

(1) Չիւստան, Ափրիկէի զանազան երկիրները, Բոսնիայի և Մատակասքար են :

կան խորհուրտք՝ առանց տեսնելու... (Հայրապետի, Պատրարքի Իւթիւնեանի) և կամ գոնէ տեղւոյս Հովուութեան և պատ հողաբարձութեան կողմէ յանձնարարական մը : խեղճ հայ մանկախն : մասնաւոր աղջիկներ կը համարական յանձնել անձանթ և վատասիրտ մանկահաւաքչի մը : ... շատ կնճուտ է խնդիրը և զժուարարայն : Հօջուայի դուտոր՝ Ռոսէնի ձագ սոյ վատասնուն տիկին Բոլոնան շարտութիւն ի գործ պիտի զնէ, մեր ճիգերն ի զերես հանելու և անցեալ օր ալ համայն ապգիս վրայ առնելի նախատական թուղթ մը գրած էր մեզ, որուն բացատրութիւնը երբ օգտեցի, պապանձեցաւ և ներողութիւն խնդրեց ըսելով թէ «նոյն թուղթը գրած օրս, մկաւազմատ ու յուզուած էի : չը զիտէ ի ինչ գրելու և այլն եւ այլն» :

Այս անխիղճ... սպառնալիք ուղղած է ինձ թէ՛ զիտէ իմ հատատութեանս համակիր չըլլաք ու ինձի սպակից չը գտնուիք : բոլոր այս տղաք ու աղջիկներ ձեր դոռներ պիտի զրկեմ :

Այս վատ կնոջ մարդասիրական կեղծ դիմակը վար պիտի առնու և իւրու աշխարհի նշաւակ պիտի ընենք այս մեծ խարէս : ինչպէս նաև շահախն թաղէս քան : Փափագեան և որդին ստախոսն Մաքսուտ : իրենց արժանաւոր պատիժը պիտի ընդունին հայ համայնքէն սակայն տակաւին երկար է այս ճիզութեան կարծոյն քայքայումն : իրենց դժբախտ վիճակին անդիտակից այդ հայ գերիներն անտիրական աղջիկներն ու սիրուն մանկիկներն ազատագրել տալու համար նորէն պէտք է Քրանսուհու նստարանին զիւղի, ինչպէս որ : Լ. Նստնի մէջ բոյն դընոյ և «ազգապէս» անուն կրող թուականի որբերն ազատելու համար :

Այս նամակը կը կրէ փետր. 19/4 թիւը : ստորագրուած հոգեւոր հովիւ հայոց Փարիզի և Պեճիքայի Վատմապուհ քանանայ Քիպարեանի և կնքուած Փարիզի հայոց եկեղեցու ինքնով :

Մեզ կը մնար ուրիշ տարօրոյս մըն ալ ցրուել, ժամանակէ մը ի վեր կը լսուի թէ՛ տիկին Բոլոնայի հայկական ջարդերու ժամանակ զիւղած է Սուլթանին և դրամ պահանջած : խոտտոնալով Յրանսուհի մէջ ի նպատակ թուրքիոյ գրելով ստեղծել հակահայկական հոսանք մը :

Պատմութիւնը թէ և շատ նոր շէր սակայն մեզ համար էական նշանակութիւն ունեցող :

Հասանք մեր նպատակին և զըտանք նոյն իսկ այն անձը, որ ներկայ եղած է այդ թուականին Օսմանեան դեսպանատան մէջ, երբ տիկին Բոլլոնա զիւղած և դրամ պահանջած է :

Գաղանթի ժողով մը կը գումարուի զեսպանատան մէջ, Բոլլոնայի վերայ մանրամասն տեղեկութիւններ քաղելէ ետք : քննիչ պալատեանի հետեւեալ խօսքին վրայ թէ՛ «Տիկին Բոլլոնան ու է բարոյական և նիւթական ու յո չունի Յրանսուհի մէջ, կեսուարար անոր տրուելիք դրամը պատուհանէն վար նետել ըսել է, քանի որ մեր կառավարութեան չի պիտի կրնայ ոեւ է կերպով օգտակար ըլլալ», ահա ատկէց ետքն է որ Բոլլոնան կը սկսի հայասէր գտնուել իր փորի խոտտուէն :

Նոր հանելուկ մըն ալ կայ : ինչո՞ւ տիկինը 4-5 ամսէ ի վեր թուրք

կառավարութեան զէմ իր լեզուն փոխած է ասոր լուծումը տեսնենք ով պիտի համարակալի տալ :

Հերթք է՝ որ ունի ականջս լսելոյ լուրից :

ՍԻՂԷ

Բարիդ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուկա 14 մարտ

«Իրաւունք»-ի փետրվար 16/ թերթին մէջ՝ Շումլայէն որոտնեցիկ ստորագրութիւնով թղթակցութիւն մը երեւցաւ :

Աւելորդ է ըսել թէ՛ խնամակալութեան համար ու է նշանակութիւն չունին այլ և այլ կեղծ «Որոտնեցիկ»-ներու յերիւրանքները : Սակայն խնդիրը այն է որ այդ պարտքը յանդգնութիւնը ունեցեր է՝ արհամարհական ոճով մը ծաղրելու տեղադրուած պարտականութիւնն օգտին տրուած պարտականութիւնն ալ, գոյացած հանոյթն ալ :

Սեր պարահանգէսը անդի ունեցաւ շատ կանոնաւոր կերպով տեւեց մինչև առտուան ժամը 4ը և ըստ ծախքերը հանելէ վերջը՝ զուտ հասոյթ գոյացաւ 60 ֆրանք :

Յիշենք նաև թէ՛ խնամակալութիւնն 100 ֆր. զուտ հասոյթ մըն ալ ունեցաւ անցեալ դեկտեմբերի 22/ին՝ մանկապարտէյի մանկիկներու կողմէն տրուած մէկ գողտրիկ ներկայացումէն :

Իրանք թէ մեծաքանակ գումարներ չեն ասոնք, բայց գիտենք նաև թէ մեծաքանակ հայութիւն մը չէ որ ունինք Շումլայի մէջ :

Սերնք «Որոտնեցիկ»-ներուն պէս չենք մտածեր :

Մեզ համար շատ սուղ են ժողովրդի մը՝ իր կրթական գործին նուիրած «սանթիմ»-երը : Եւ այս առթիւ մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք ամեն անոնց, որոնք ազնուութիւնը ունեցան մեր առաջարկած սոմակները չմերժելու :

Աւելցնենք թէ՛ մեր պարտականութիւնն է զնաք չխնայել ստեղծելու համար նիւթական միջոցներու վանազան ազդու ընթացքիչ կամ շատ :

Մենք պատրաստ ենք աւելի մեծ զոհողութիւններ ընել աւելի գումարներու համար իսկ :

Այդ ձեռով է որ պահուած է տեղոյս իդ. վարժարանը շատ մը տարիներէ ի վեր և այդ ձեռով է որ մենք ու պիտի պահենք զայն մինչև մեր պաշտօնավարութեան պայմանաժամին լրանալը : Զէ՛ որ ժամանակին ըստանձնեցինք ատիկայ :

Այս մտքով նամակ մը խրկած էինք Վառնայի «Իրաւունք»-ին՝ հերքելու համար իր «Որոտնեցիկ»

ին տուած սխալ լուրը : Բայց թերթին խմբագիրը փոխանակ ըստ օրինի, մեր նամակը տպագրելու՝ փետր. 25/ի իր թերթին մէջ կարգ մը իրեն վերաբերող հարցումներ կուզէ մեզ և միայնակամայն մէջտեղ կը նետէ սա ալլանդակ խօսքն ալ, «կանանց յատուկ դիւրազգածութիւնը ճանչնալով չենք զարմանար...»

Ձեռք հասկնար թէ ի՞նչ ըսել կուզէ. չենք ալ ուզեր հասկնալ : Միայն կ'աղագրարենք իրեն և իրեններուն թէ մենք մեզի բոլորովին աղատ կըզգանք այդ կարգի հարց մասերու բաւականութիւն տալէ : Նոյնպէս հարկ չենք տեսներ երկար բարակ բացատրութիւններու մէջ մտնելուն՝ թէ ինչո՞ւ մարկապարտէյի վարձուհին հանդէսին ներկայ չէ գտնուած :

Թող ամեն մարդ հասարակական գործերու ուղղութիւն տեսնելու մը հովեր չառնէ :

Եթէ «Իրաւունք»-ի այդ կեղծ որոտնեցիկն քաւէ հաշիւ ունի յիշեալ վարձուհիին հետ, կրնայ ուղղակի անոր հետ կարգադրել զայն : Փոխանակ երեսին դիմակ անցուցած հրապարակ նետելու և մտքերը պշտորելու :

Աս մեր առաջին և վերջին խօսքը :

Ի դիմաց Լուսաբերան իգ. վարժարանի խնամակալութեան : Աստուածաբան Ատենապետուհի Ա. Գ. Թաղապարտէյան Մ. Մեղիմեան Գանձապետուհի Մ. Մ. Գալաֆեան (Կ.Ի.Բ.)

ՍԱԿԵՂՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

— 0 —

«Մակեդոնական շարժում» ֆրանսերէն թերթը իր Պոլսոյ թղթակցի հետեւեալ նամակը տրւեցաւ :

«Վ. յով Պոլսոյ մէջ խօսակցութեան նիւթը միայն Սուլթանին բարենորոգումներու ծրագիրն ընդունելն է : Դուք անշուշտ այս մասին մեզմէ աղէկ գիտէք, որովհետեւ տեղական թերթերը զայն կը ձեւափոխեն չը ճանչնալու չափ : Այսպէս կրնամ միայն ըսել որ ամենքն ալ տուժրագիրը շատ ծաղրելի կը գտնան : Թուրքերը մեծ հրճուածքի մէջ են, որովհետեւ վստահ են թէ այլ եւս ոչ ոք իրենց չը պիտի արգիլէ Մակեդոնացիները բոլորովին ճզմելու :»

Յոյներն ալ երջանիկ են վստահ ըլլալով որ իրենց պատրիարքը չը պիտի զրկուի Սուլթանին շնորհէն, քանի որ համաձայնեցաւ յոյն առաջնորդներուն հրահանգելու որ Սուլթանի հպատակութեան ուղեւորները զրկուին

և պուլիար կառավարութիւնը յեղափոխականներու պաշտպան ներկայացնել : Միայն Մակեդոնացիները յուսախաբուեցան եւրոպայէն և Ռուսիայէն ու հիմակ մեղամաղձօրէն գարնանը կուպանն որ իրենց առաջ այնքան բախիկ կը խոստանար, իսկ այսուհետեւ միայն իրենց երկրին սպանդանոց դառնալը կը նախատեսուի :

Ասոնցմէ մեծ մասը յիսուելով, հարկերով մայրաքաղաքէն կը մեկնին գէպի հայրենիք, իրենց լքուած ընտանիքներուն քով, որոնց կոտորած կոպտանայ : Թուրքերը այս չունի վրայ շատ գէշ աչքով կը նային որովհետեւ կը կարծեն թէ բոլոր այս կաթնավաճառները, պարտիզպանները և հացագործները Պոլիսէն կը հեռանան միայն ապստամբական խմբերու մէջ զինուորագրուելու համար : Թուրքերու համար սեփական օճախը պաշտպանելն ալ տպաւորութիւն կը համարուի : Իրողութիւնը աս է որ 500 հոգի չափ Մակեդոնացիներ վաղորօք թողած են Պոլիսը, մտած են իրենց երկիրը :

Միւս կողմէն ալ Պոլսոյ թուրքերն անգամ չ'ըզ պատրաստուին Պոլսոյ քանի մը թաղերուն մէջ ազդու Մակեդոնացիները շարգելու : Ահա ատոր մէկ պայցոյցը : Փետրուար 22/ին խումբ մը յոյն առաջակներ ժողով կուներան թող Գոլիարանի տանը մէջ : Ոստիկանութիւնը կարծելով որ ասոնք Մակեդոնացի յեղափոխականներ են զանոնք կը պաշարէ և կը փորձէ ձերբակալել : Ոստիկանութիւնը մեծ դժուարութեան կը հանդիպի, որովհետեւ առաջակները քաջութեամբ կը պաշտպանուին և չեն թողուր ոստիկանները ներս մտնան : Թաղին մէջ զժողովին իրարանցում մը կ'էլինայ : պայթիւններու որոտումը այնչափ կը սարսափեցնէ Պոլսեցիները, որովհետեւ կը կարծուի թէ Մակեդոնացիները ապստամբած են, որ քանի մը թաղերու խանութները ու կաֆէները կը գողցուին : Նոյն միջոցին թուրքերը և քուրդերը շարքի կը պատրաստուին :

Քասրմ վաշայի փողոցներուն մէջ մահակներով զինուած խմբերը արգէն կը պտտէին և հրաժարի կոպտէին սպանդանոցի վերածելու :

Սեր թուրք մը կերթայ Մակեդոնացի կաթնավաճառի մը քով և կըսէ հեգնելով որ այդ օրը ինք իր պարտքերը պիտի վճարէ, այսինքն Մակեդոնացի պիտի սպաննէ :

Ուրիշ թուրք մը գաշոյնը որով կերթայ Մակեդոնացի հացագործի մը քով և կը յայտարարէ որ ինք սպանութիւնները

հացագործէն պիտի սկսի ևն : Երբ իմացուեցաւ որ ոստիկանութիւնը գողերու հետ գործունէր, մարգասպաններուն պատրանքը մեծ եղաւ :

Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ն

Խումբ մը մատաղ երիտասարդները զգալով հայաստանի մէջ գանուոյ հայ օրերիկներու թշուառութեան հանգէպ իրենց ունեցած պարտականութիւն, բարեկենդանի երեկոյին ձգտելով ինքնաբերաբար կորոչեն օգնութիւն մը ընելու յիշեալ որբերուն, տուներ պատելով նուէր հաւաքել :

Գործ. ժողովս շնորհակալութեամբ ստացած է յիշեալ ազնիւ երիտասարդներու հաւաքած 15 (սասնեւհինգ) ֆրանկ :

Ինքնին ուրախալի եւ գովելի է այն ձեռնարկն, կը յուանք թէ սոյն երիտասարդները ուրիշ առթիւ ալ չպիտի թերանան իրենց պարտականութեանց մէջ և թէ ուրիշներ եւս պիտի հետեւին սոյն բարի օրինակին :

Գործ. ժողովս նաև հրապարակաւ շնորհակալութիւն կը յայտնէ հետեւեալ նուիրատուաց

Ասատուր Նշանեան 1 (մէկ) ֆր. Խ. Արզիք Տամատեան հարսանիքի առթիւ 30 70 (իրիսուն իսթանաուն) ֆր. Մ. Սիմօնեան 5 (հինգ) ֆրանք. օր. Մաննիկ Ոսկերիչեան 2 (երկու) ֆր. Թորոս Գուրիկեանի հարսանիքի առթիւ հաւաքուած 5,75 (հինգ) իսթանաուն հինգ) :

Պատմի գաղթականներէն հաւաքուած. — Խաչատուր Պուրնութեան 1 (մէկ) ռուբլի, Յակոբ պաշտեան 50 (չիսուն) կոպեկ, Մկրտիչ Գրիգորեան 50 (չիսուն կոպեկ), Գրիգորեան 1,50 (մէկ յիսուն) ռուբլի, կարապետ յարութիւնեան 1 (մէկ) ռուբլի, Փիլիպոս Թաշճեան 50 (չիսուն) կոպեկ, Մուշեղ Յովհաննէսեան 50 (չիսուն) կոպեկ, կիրակոս Զաքարեան 50 (չիսուն) կոպեկ, Վահան Աւաքիան 1 (մէկ) ռուբլի Սարգիս Յակոբեան 50 (չիսուն) կոպեկ, Յարութիւն խաչիկեան 1 (մէկ) ռուբլի, Յովսէփ Արապեան 50 (չիսուն) կոպեկ, Տօնիկ Պալասարեան 50 (չիսուն) կոպեկ, Աւետիս Մէլիսանճեան 2 (երկու) ռուբլի, Պապօ Պապօեան 50 (չիսուն) կոպեկ, Խըլօ Ռազոյեան 50 (չիսուն) կոպեկ, և Նշան Թէսփիլեան 50 (չիսուն) կոպեկ :

(Կ.Ի.Բ.)

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ Մ Ի Ո Ւ Թ Ի Ն

(Երջարնական նամակ)

Ը ն կ ե ռ ն ե ռ ,

Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան ներկայ 1903 թի տարեկան Համագումարը տեղի պիտի ունենայ Բելգիայի մայրաքաղաքում՝ Բրիսսել, Ապրիլի 1 ին :

Հաղորդելով Ձեզ այդ մասին, խոնարհաբար խնդրում ենք՝ ա) ներկութիւն յանձն առնել՝ գումարել տեղական ուսանողական մարմինների օգուտով :

բ) կայացնել այդ ժողովում պատգամաւորներն ընտրութիւն :

գ) Գրել մեզ այն առաջարկութիւնները, որ տեղական մարմինները կամենում են ներկայել Համագումարի քննութեան, և

դ) Հաղորդել մեզ՝ Համագումարին դասախօսել ցանկացողներին անունները և դասախօսութեան նիւթը :

Պատգամաւորների ընտրութիւնը պարտաւորական է ըստ ուսանողական մարմինների համար : Ուսանողաշատ քաղաքներում իւրաքանչիւր 10 անդամի համար պիտի ընտրվի մի պատգամաւոր : Աւելի պակաս անդամ ունեցող (ոչ նազ քան երեք) քաղաքները կարող են ուղարկել մի մի ներկայացուցիչ :

Դրա հետ միասին խնդրում ենք՝ ա) Բարեհաճել անդամագրել բոլոր ուսանողներին և դանձել անդամավճարները, և բ) Ուղարկել վերը յիշած տեղեկութիւնները Կարգադիր Յաննաժողովին՝ ոչ ոչ քան մարտի 15ը, որպէսզի կարելի լինի մասնակից պատրաստել Համագումարի օրակարգը և Պիութեան տեղեկագիրը :

Ընկերական բարեկեցիկ ԿԱՐԳԱՎԻՐ ՅԱՆՆԱՅՈՂԱԿԱՆ

1903 Մարտ 1

Փրնէվ

Հասցէն

Իւնիոն սօ դէքիւսիէն Արչիւնիան սր լեոնոր, Ռիւ սր լեգոյ-սր-շըմի-Չ Ժեկիվ Սիւիզ

ԲԱՅ ՆԱՍԱԿ

Ան Տ. Մասարիս Մուխսեան Աս Յամի տեառն 96ի գաղթականներէն եմ. 97 թուականին յունիս ամսոյ 16րդ. օրը տէր Գարեգին քահանայ Արծրունիի ձեռամբ պակուած եմ Պոլսեցի օրիորդի մը հետ, ցարդ վկայագիր չէի ստացած ամուսնութեանս մասին գացի Թաղ. խորհրդարան տուրք վճարեցի սակայն կը վարանին

խնդիրս կարգադրել, ու առարկելով թէ արձանագրութեանց տետրին մէջ անուան շնանակուած չէ՛ բնաւ, բան մը որ ինծի պարմանք պատճառէ չէ գտաւ յայտնութի մէջ ալ կը ձգէ, ուստի կը ինչրեմ որ բացատրութիւն տաք ինծի իբրեւ նախկին Թաղ. խորհրդոյ Ատենապետ քանի որ 10 տարեկան քաղաքումս որ Ձեզի յանձնեցի այն ալ նշանակած չէք տետրակին մէջ :

Յարգանք

Մարտի 10 Տէ. Բարսիլեան Նարեկեցի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Աթինայի թուրք գեսպանը այն յոյն ուսանողներուն, որոնք փախաբ յայտնած էին թղթի գործերու մէջ կամաւոր զինուոր մտնալ, յայտարարած է որ Սուլթանը մեծ ուրախութեամբ լսած է ուսանողներուն այդ փախաբի մասին և բարեհաճած է շիրիք իր թիկնապահ զօրաց մէջ ընդունիլ իբր ենթապաներ :

Ուսանողներէն մին պատասխանած է դեսպանին հետեւեալ խօսքերով. «Մենք յոյներս որ թուրք կայսրութեան ամենակարեւոր տարրը կը կազմենք թէ մեր թիւովը, թէ զարգացման և վաճառականական աստիճանովը կը յայտարարենք որ Սուլթանի հովանաւորութեան տակ կուպրինք ամենապահով կերպով, իսկ աւազակ պուլկարներուն տեղը բանտերն ենք » :

— Կառավարութիւնը էտիրնէի գծին վրայ գտնուած տիւնամիտին պատճառով, երկաթուղիի ընկերութեան կը պահանջէ որ այն կայարանին բոլոր պաշտօնեաները արտաքսուին :

— Կառավարութիւնը Գոնեա Բաղատի երկաթուղին շինող ընկերութեան պահանջէր է որ գծին քովերը եւրոպական գաղթականութիւններ չը հիմնուին :

ՌՈՒՍԻԱ

Ռուս կառավարութիւնը սերպ կառավարութեան տասը միլիոն փամփոշտ նուիրած է :

— Նահանգները բարենորոգելու համար կազմուած յանձնախումբը արգէն գործի սկսեր է ներքին գործոց նախարարի նախագահութեամբը : Ժողովներու կը մասնակցին հինգ նահանգապետներ, և ուրիշ բարձրագոյն պաշտօնեաներ :

ՊՈՒԼԿԱՐԻԱ — ՄԱԿԵՂՈՆԻԱ

Պատերազմական նախարար Բարբիքով վերջնապէս իր հրա-

ժարականը տուած է : Հրատարականին գլխաւոր պատճառներէն մին ալ ան է որ իր և ընկերներուն հայեցակէտներուն մէջ, քաղաքական ներկայ կացութեան մասին, մօծ տարբերութիւն կայ : Պատերազմական նախարարին գործերն առ այժմ նախարարապետ պ. Տանկֆ պիտի վարէ : Յետոյ կը կարծուի որ մենք ալ Բարբիքովին համակրութիւնը : Մակեղոնեցիներուն կողմն է և ան զինուորականութեան վրայ խօսելու չէ հակեր կերպ, որ մակեղոնական գործերուն չը մասնակցին :

— Պօլիս Սարաֆով և ապա Սաև առանձին առանձին մեծ ընդհարումներ ունեցեր են զիրենք հետապնդող թուրք զօրքերուն հետ և փոքրաթիւ զոհեր տալով բաւական թուրք զինուոր ջարդեր են :

— Իտալացի սպայ մը Իտալիոյ մէջ սուրված և ընկերութիւն բրած պուլկար սպայի մը նախկին մը գրելով իր խորին համակրութիւնը յայտնած է մակեղոնական դատին համար և իր կեանքը ու բազուկը առաջարկած է թուրքերին գէժ կուսելու համար :

— Մօֆիայի մէջ պարոն Իօլ Ասկէրեան սկսած է ֆրանսերէն լեզուով շարաթաթերթ մը հրատարակել :

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՎԱԶԻՆ — ԵՐԳՒՐԱՆ

Բանս ստեղծութեանց, ազգային, յեղափոխական, ժողովրդական և սիրային երգերու այս ճոխ հաւաքածոն մինչև հիմայ նմանօրինակ հրատարակութեանց ամէնքը կը գերազանցէ :

Բաղկացած է 600 մեծադիր երեսներէ, զարդարուած է ընտիր թուղթի վրայ տպուած հայ նշանաւոր դէմքերու գեղեցիկ պատկերներով :

Քանի մը անձնու անհատական ջանքերով Ամբրիկայի մէջ լոյս տեսած այս կարեւոր հրատարակութեան ամբողջ հատոյթը, յատկացուած է զուտ բարեսիրական գործի մը : Կարժէ որ ամէն հայ ունենայ այս գիրքէն հատ մը իր տան մէջ :

Պուլկարիոյ համար մասնաւոր ջեզլեղած է և կը վաճառուի համեմատաբար աժան գինով, ոսկեղրամ 5 ֆրանկի : Փօստի ծախքը գնողը կը վճարէ :

Գնել փափաքողները կրնան գրիմել Կ. ՊիՌԻԱՆԻ, ուսուցիչ ի Ֆիլիպէ :

Միայն : ՖՐԱՆՍԱՅԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՎԻՊԱՍԱՆ ՆԵՐՔԷՆ ԼՈՒՐԵՆՆՈՒՍԻԱ

ԱՆԻԾԵԱԼ ՊԱՆԴՈՎԸ

Գերազանցապէս հետաքրքրաւոր և ուսման մասը լրացաւ Երկրորդ հատորը սկսաւ հատարակութիւնը :

Ամէն գասակարգի զիրարմասելի ըլլալու համար՝ գիրքը երկու մասով երեւան կելլայ (մէկ հատորի մէջ) և ամբողջութիւնը 52-54 թերթերէ պիտի բաղկանայ :

Իւրաքանչիւր մասին բաժանորդագրին է՝ Վառնայի համար 1, 25 ուրիշ քաղաքներու և արտասահմանի՝ 4, 50 : Իսկ ամբողջութեան բաժանագրին է, Վառնայի համար 2, 50 : և Վառնայէ դուրս 3 ֆր. ձեռքէ առնողները պիտի վճարեն արտօնական պէն՝ 8 երեսնոց պրակին՝ 5 սանդղի : Այն քաղաքները և կամ գիւղերը որ մէկէ աւելի բաժանորդ ունինք, միայն մէկ հասցէի տուց շարաթ երկու պրակը մէկ ծրարով պիտի պրակուի փոփոխ ծախքը հրատարակչին վրայ է :

Փափագողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին՝ imprimerie Orientale, Onnik Parseghlian Varna Դրամի փոխարէն նամակադրօժ պ կ'ընդունուի :

Ա Ր Մ Է Ն Ի Ա

Լ Ի Ե Ի

(Հեղինակի պատկերով և ինքնակենսագրութեամբ)

Գ Ր Ե Գ

Պ. Տ Օ Ն Ա Ս Կ Ե Տ Ե Ա Ն

Գ Ր Ե

2 1/2 շիլին 1 րբ. 25 կոպ.

3 ֆր. 60 սանթ

Դիմել այլատասիրողին.

1, 7 Կոստանթն Բոս

Հեթնիքս'ս Բուփ

Լուսոն Մ.

Հ Ա Յ Կ Ա Յ Ա Ն Գ Ր Ա Տ Ո Ւ Ն

Ա. Չ ա Ր պ ի ա ն Ե ի Ե ա ն Ի

Պատիւ ունիմ՝ ծանուցանել Պուլկարիոյ և Ռուսանիոյ Հայ ժողովուրդին այս անգամ աւելի ճոխացուած եմ Գրատունս : Ամէն տեսակ դպրոցական և վրայական գրքեր և օրացոյցներ ունիմ պատրաստ :

Հայկական քարդ փոսթալ հասը 40 սանթիս :

Հայկական ընդարձակ երգարան հասը 2 ֆր. : Ամերիկայի ընդարձակ երգարան հասը 5 ֆր. : Հասցէ՝ Ա. ՉԱՐՊԱՆԻԱՆԻԱՆ (Պուլկարիս) Վարնա

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна